ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 հոկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

152
(2818)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍԱՀՄԱՆԱՉԱՓԻՑ ՇԱՏ ԲԵՆԶԻՆ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ

Ի պատասխան Ձեր՝ 25.09.2023 թ. տեղեկատվություն ստանալու հարցման, ստորեւ ներկայացվում է << Ազգային ժողովի նախագահի տեղակալների եւ հանձնաժողովների նախագահների ծառայողական ավտոտրանսպորտային միջոցների համար վերջին մեկ տարում (01/09/2022 - 31/08/2023) ծախսված վառելիքի վերաբերյալ տեղեկությունը:

ԱԺ փոխնախագահ, հանձնաժողովի նախագահ	Բենզին (լիտրով)	Հավելյալ
ԱԺ նախագահի տեղակալ	3600	320
ԱԺ նախագահի տեղակալ	3600	220
Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	3410	0
Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	3300	0
Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով	3600	170
Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, զբոսաշրջության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողով	3600	0
Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով	3600	290
Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով	3600	70
Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	3300	0
Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	3300	60
Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	3600	0
Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողով	3600	0
Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	3600	80
Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով	3400	100

Նշենք նաեւ, որ տարվա ընթացքում հավելյալ բենզինի տրամադրման անհրաժեշտություն առաջացել է՝ պայմանավորված խորհրդարանից դուրս տեղի ունեցած մի շարք աշխատանքային հանդիպումներով, նիստերով ու քննարկումներով:

Միաժամանակ հայտնում ենք, որ ԱԺ ծառայողական ավտոտրանսպորտային միջոցների համար տրամադրվող վառելիքի ամսական չափաքանակները կարգավորվում են 30.11.2021 թ. Կ-191-Ա կարգադրությամբ, որը հասանելի է ԱԺ պաշտոնական կայքի (http://www.parliament.am) «ԱԺ նախագահ» խորագրի «Որոշումներ, կարգադրություններ» ենթախորագրում:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ԱԺ նախագահին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների վերաբերյալ տեղեկությունը հրապարակման ենթակա չէ:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության պետ

Լաուրա Անտոնյան

Ծառայողական ավտոմեքենաները Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք դարձել են անձնական օգտագործման՝ պետության հաշվին: Այդ են վկայում «Ժողովուրդ» օրաթերթի հարցումների պաշտոնական պատասխանները: Հիշեցնենք՝ դեռեւս նախորդ շաբաթ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ շատ հանձնաժողովների նախագահների սպասարկող ավտոմեքենաները սահմանաչափից շատ բենզին են ծախսում, եւ նախագահները հստակ չեն բացատրում, թե ինչու: «Ժողովուրդ» օրաթերթը հարցման մեկ այլ տողով խնդրել էր տրամադրել տեղեկություններ այն մասին, թե ԱԺ նախագահի տեղակալներ Ռուբեն Ռուբինյանին եւ Հակոբ Արշակյանին սպասարկող ավտոմեքենաները որքան բենզին են ծախսել, եւ որքան է եղել նրանց տրամադրված բենզինի հավելաչափը (01/09/2022-31/08/2023թթ): Նաեւ խնդրել էինք պարզաբանել, թե ԱԺ պաշտոնյաները սահմանված չափից ավել բենզինը ինչ անհրաժեշտությամբ են բացատրել եւ ստացել: «Նշենք նաեւ, որ տարվա ընթացքում հավելյալ բենզինի տրամադրման անհրաժեշտություն է առաջացել՝ պայմանավորված խորհրդարանից դուրս տեղի ունեցած մի շարք աշխատանքային հանդիպումներով, նիստերով ու քննարկումներով»,-պատասխանել են ԱԺ-ից: Նկատենք, որ ԱԺ լրատվական ծառայության ղեկավար Լաուրա Անտոնյանը մեզ տվել է պատասխան միայն թվերի տեսքով՝ չներկայացնելով, թե ինչ անհրաժեշտությամբ է պայմանավորված եղել պաշտոնյաների հավելյալ պահանջը: Տեղեկացնենք նաեւ, որ մեր հարցումն ուղղված էր ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանին, որը պետք է միայն խելամիտ բացատրություն ստանալու պարագայում պաշտոնյաներին ԱԺ միջոցներից հավելյալ բենզին տրամադրի: Նրանք թաքցնում են պաշտոնյաների օգտագործած բենզինի ծախսերի իրական պատճառը, չեն ստուգում , թե որքանով է հիմնավոր հավելյալ բենզինի պահանջը: «Ժողովուրդ» օրաթերթը տարբեր փորձագետների հետ զրույցում պարզեց, որ պաշտոնյաներին տարեկան 3600 լիտր տրամադրվող բենզինը անհնար է օգտագործել մինչեւ վերջ, եթե ծառայողական ավտոմեքենան իրապես միայն ծառայողական նպատակներով օգտագործվի, այլ ոչ թե անձնական, ընտանեկան այլ կարիքներ հոգա: Հետեւելով ԱԺ փոխնախագահների գործունեությանը՝ կարելի է միանգամից ասել, որ նրանք տարվա ընթացքում աշխատանքային օրերի զգալի մասն անցկացնում են գործուղումներում արտերկրում, բնականաբար, դրանք էլ՝ պետության հաշվին: Այսինքն՝ եւ Հակոբ Արշակյանը, եւ Ռուբեն Ռուբինյանը, որոնք համապատասխանաբար ապրում են Դավիթաշենում եւ Շենգավիթում, պետք է ամեն օր աշխատանքի գան Երեւանի Ազգային ժողով եւ վերադառնան: Գործուղումների օրերին էլ նրանց վարորդները պետք է իրենց օդանավակայան հասցնեն ու վերադառնան, կանգնեցնեն ավտոմեքենան, մինչեւ ղեկավարները վերադառնան Հայաստան: Կարծես թե, այդպես չի եղել: Ծառայողական ավտոմեքենաները օգտագործվում են շռայլորեն: Դա է պատճառը, որ 1 տարվա ընթացքում հասցրել են 3600 լիտր բենզին «դուրս գրել»՝ օրենքի տառին համապատասխան, իսկ մի դեպքում՝ 320, մյուս դեպքում 220 լիտր էլ հավելյալ են պահանջել: Ստացվում է՝ ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը ոչ թե բողոքում էր «պադավատապետությունից», այլ այն բանից, թե ով է այդ «պադավատապետության» ղեկին:

Արդեն հրապարակվել է 2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշոր հարկատուների ցանկը: 2022 թվականի համեմատ՝ 1000 խոշոր հարկատուների առաջին հնգյակը փոփոխվել է. այն գլխավորում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Գազպրոմ Արմենիա», «Ինտերնեյշնալ Մասիս Տաբակ», «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ընկերությունները: 2023 թվականին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» եւ «Գազպրոմ Արմենիա» ընկերություններն իրենց դիրքերը չեն զիջել, սակայն 3-րդ տեղում «Ինտերնեյշնալ Մասիս Տաբակ»-ը իր դիրքերը զիջել է «Գրանդ Տոբակո» ընկերությանը, որի տարեկան հարկային մուտքերը կազմել են 31 մլն 031 հազար դրամ: 4-րդ տեղում «Մոբայլ Սենթր Արթ» ընկերությունն է, որի հարկային մուտքերը, նախորդ տարվա համեմատ, գրեթե կրկնապատկվել են՝ 17 մլդ 569 մլն դրամից դառնալով 30 մլդ 133 մլն դրամ, որը, նախորդ տարվա նույն ամիսների համեմատ, աճել է 4 անգամ: Հիշեցնենք նաեւ, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ի դեմ: Բանն այն էր, որ հանձնաժողովը բողոքներ էր ստացել քաղաքացիներից այն մասին, որ ընկերությունը անբարեխիղճ մրցակցություն է դրսեւորում, մասնավորապես՝ ոչ հավաստի գովազդի միջոցով մոլորեցնում է սպառողներին: Հարուցված վարչական վարույթի մասին այլ մանրամասներ չկան, պարզապես փաստն այն է, որ այս կազմակերպությունը, օգտվելով տոների հանգամանքից, գայթակղիչ գովազդներ է ստեղծում, ապա չի կարողանում դրա տակից դուրս գալ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի գործով դռնփակ նիստը թեւակոխում է հետաքրքիր փուլ: Հակակոռուպցիոն դատարան են հրավիրվելու վկաները՝ ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանը, ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը եւ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը: Հակակոռուպցիոն կոմիտեն նախապես հաստատած վկաներից միայն չի հարցաքննի Արայիկ Հարությունյանին , քանի որ նա հակառակորդի կողմից գերեվարված է: Նշենք, որ Գլխավոր դատախազությունը պաշտոնապես հայտնել էր, որ ՀՀ գլխավոր դատախազությունը Արցախի պատշգանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկել է դատարան: Հիշեցնենք՝ օգոստոսի 30-ին Միքայել Արզումանյանը ձերբակալվել էր Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու մեղադրանքով: Ըստ ՔԿ-ի՝ գեներալ-լեյտենանտը 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ը Շուշիի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, ինչը անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ: Օգոստոսի 31-ին Արզումանյանի ձերբակալման ժամկետը լրացել էր, նա ազատ էր արձակվել, սակայն նրան կալանավորելու միջնորդություն էր ներկայացվել դատարան, եւ սեպտեմբերի 1-ին Արզումանյանը կալանավորվել է: Նշենք, որ Արզումանյանը ՊԲ հրամանատար նշանակվեց 44-օրյա պատերազմի վերջին փուլում՝ 2020թ. հոկտեմբերի 27-ին՝ փոխարինելով Ջալալ Հարությունյանին. նա պաշտոնից ազատվեց 2021թ. սեպտեմբերին:



Թեեւ սեպտեմբերի 17-ի՝ Երեւանի ավագանու ընտրություններում կրած պարտությունից հետո ՔՊ-ականները մի կերպ կարողացան քաղաքապետի պաշտոնը օկուպացնել, այնուամենայնիվ, պարտությունը մնացել է Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ականների կոկորդին: Իշխանության ներսում քննարկում ու վերլուծում են պարտության պատճառները, նոր մեղավորներ փնտրում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ այդ օրը երեկոյան՝ ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո, ՔՊ շտաբում թեժ է անցել: Նիկոլ Փաշինյանն իր տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ եկել էր շտաբ, ՔՊ-ականներից հաշիվ են պահանջել, թե ինչու այդքան ջանքերից հետո տապալեցին ընտրությունները ու պարտություն կրեցին: Նիկոլ Փաշինյանը գոռգոռացել, կռիվ է արել ՔՊ-ականների հետ, բանն անգամ հասել է այնտեղ, որ Փաշինյանը շիշ է նետել թիմակիցների ուղղությամբ: Աննա Հակոբյանն էլ իր հերթին է փորձել բացատրություններ պահանջել ՔՊ-ականների հետ: Պարտության մեղավոր ճանաչվել է մեկ գործող քաղաքապետը, մեկ իշխանականները փորձել են պարտության մեղքը բարդել շտաբի պետ Արմեն Փամբուխչյանի վրա: Նրան թույլատրվել էր անգամ քրեական տարրերի հետ հանդիպել, նրանց ծառայություններից օգտվել, բայց էլի չստացվեց: Այսպիսով, թեեւ պարտությունից շուրջ 1 ամիս է անցել, բայց ՔՊ-ականները դեռ չեն հարմարվել դրա հետ, մինչ օրս դեռ քննարկում, վերլուծում են պատճառները: Նիկոլ Փաշինյանն անգամ հրապարակավ է խոստովանել, որ արդյունքները իրենց համար մտահոգիչ էին:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԶԲԱՂՎՈՒՄ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Արցախի լուծարումից եւ այնտեղից բնակիչների բռնի տեղահանումից հետո արցախցիների կեսից ավելին անտանիք եւ ձեռնունայն մնացին: Խոսքն այդ թվում նաեւ Արցախի կառավարական համակարգում աշխատող պաշտոնյաների մասին է:

«Ժողովուրդ» օրաթերթը խոսել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մետաքսե Հակոբանի հետ: Նա մեզ հետ զրույցում հայտնել է, թե Հայաստանում ինչպես է պատրաստվում աշխատանքի տեղավորվել:

Անդրադարձել ենք նաեւ Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի այն հայտարարությանը, որ Արցախը լուծարելու մասին նա որեւէ փաստաթուղթ չի ստորագրել:

-Պատգամավորների գերակշիռ մասը չի հրաժարվի իր առաքելությունից. դա ես կարող եմ փաստել: Կոնկրետ իմ ու մեր քաղաքական ուժի մասով կարող եմ ասել, որ մենք այս փուլում գտնում ենք, որ ամենակարեւոր գործունեությունը, որ պիտի ծավալենք, արցախցիներին հավաքագրելն է:

Ես եղել եմ համայնքներում, որտեղ իրենց աջակցությունն էին մարդիկ ցույց տալիս՝ այս առումով հասկանալով, որ իրենց բեռը ինչ-որ չափով կթեթեւանա, եւ կային համայնքներ, որտեղ միայն սրերով ընդունեցին: Այդ առումով կարող եմ ասել, որ բարդագույն աշխատանքներ են սպասվում, որովհետեւ մենք մտածում ենք՝ ժողովուրդը ծանր վիճակում է: Այս փուլում մենք փորձում ենք հավաքագրել մեր հայրենակիցներին, ինչ-որ վիրտուալ հարթակի տակ ունենալ ընդհանուր տեղեկություններ, առանձնացնել խոցելի խմբերը: Այն մարդիկ, որոնք պատրաստ են այսօր լուռումունջ աջակցել արցախցի ընտանիքներին, փորձում ենք նրանց եւս հավաքագրել, որպեսզի կարողանանք ոտքի կանգնել բոլորս: Այսինքն՝ մենք այն փուլում ենք, որ պետք է կարողանանք հնարավորինս արագ կապիտալի հավաքագրում անել՝ որեւէ տարբերություն չդնելով Հայաստանի ու Արցախի մեր հայրենակիցների միջեւ, հասկանալով, որ այսօր Արցախից մնացած կարեւոր կապիտալը ժողովուրդն է, եւ չպետք է թույլ տալ, որ իրենք կորեն կամ հայտնվեն ծանրագույն իրավիճակում կամ լքեն Հայաստանը:

-Տիկին Հակոբյան, ըստ մեր տեղեկությունների՝ այս պահին պատգամավորները որեւէ ֆինանսական աղբյուր, եկամուտ չունեն, չեն աշխատում: Ի՞նչ եք անում այս պահին ֆինանսապես Ձեզ ապահովելու համար:

-Գիտեք, մինչ պատգամավոր դառնալը բոլորը, բնականաբար, իրենց մասնագիտությամբ աշխատել են, եւ ես գիտեմ մարդկանց, որոնք իրենց մասնագիտությամբ են աշխատում:

-Ովքե՞ր կոնկրետ:

-Եկեք անուններ չտամ:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՉԱԽՈՅԱՆԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ աղօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Օրերս խորհրդարանում ընդունել եմ հասարակական ակտիվ գործունեություն ծավալող Արթուր Չախոյանին, որը շարունակում է իր պայքարը կոռուպցիայի դեմ՝ բացահայտելով Երեւանի քաղաքապետարանի գործունեության բացերը:

Ի պատասխան իր ակտիվ բացահայտումներին՝ նա թիրախավորվել է գործող իշխանության կողմից եւ ենթարկվել հստակ հրահանգով կատարված հետապնդումների ու հարձակումների: Այդ են վկայում դեպքի առթիվ կատարված բազմաթիվ հրապարակումները:

Ա. Չախոյանի հետ զրուցել ենք իր գործունեությամբ բացահայտումների շարունակականության խիստ անհրաժեշտության մասին, որն իր խթանը կարող է բերել հետագայում քաղաքային բյուջեի խնայման գործում:

Պատրաստակամություն եմ հայտնել հնարավոր բոլոր տարբերակներով աջակցել նրան՝ թույլ չտալու իր խոսքի ազատության իրավունքի խաթարումը: Միջազգային իմ գործընկերների հետ հանդիպումներում շարունակելու եմ բարձրաձայնել նաեւ Արթուր Չախոյանի իրավունքների պաշտպանության խնդիրը: Կարծում եմ, որ ՀՀ քննչական կոմիտեն եւ ՀՀ դատախազությունը պետք է խորը եւ օբյեկտիվ ուսումնասիրության ենթարկեն գործը՝ Ա. Չախոյանին ճանաչելով որպես տուժող կողմ՝ մեղադրանք ներկայացնելու փոխարեն:

Պաշտոնական հաղորդագրությունն առ այն, որ Ա. Չախոյանի նկատմամբ անհայտ անձինք փորձել են հաշվեհարդար տեսնել ադրբեջանական աղբյուրներին ինչ-որ տեղեկություններ տրամադրելու մտացածին պատճառաբանությամբ, վկայում է պետական ինստիտուտների անգործության եւ ինքնադատաստանի ինստիտուտի գոյության մասին:

Սա միանշանակորեն դատապարտելի է եւ նշանակում է, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը եւ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ահռելի աշխատանք ունեն գործը արդար քննության ենթարկելու հարցում, որին անձամբ շարունակելու եմ ուշադրությամբ հետեւել»:

ՀՆԴԿԱՍՏԱՆՆ ՈՒ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԸ

The Economic Times-ը հոդված է հրապարակել, որտեղ անդրադարձ է կատարվում Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ ռազմական ոլորտում համագործակցության մասին հարցին: Նշվում է, թե Հնդկաստանը մտածում է Հայաստանին ռազմական տեխնիկայի նոր խմբաքանակ մատակարարելու մասին:

Նոր մատակարարումների մանրամասները դեռեւս հայտնի չեն, սակայն նշվում է, թե խմբաքանակը կարող է ներառել սարքավորումներ, որոնք կօգնեն զսպող միջոցներ ստեղծել Ադրբեջանի հետ կոնֆլիկտային իրավիճակի ֆոնին:

Հիշեցնենք, որ Հնդկաստանի կողմից Հայաստան ուղարկված վերջին խմբաքանակը ներառում էր Pinaka բազմափողանի հրթիռային կայաններ, հակատանկային հրթիռներ եւ զինամթերք:

ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿԵՂԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը նախօրեին հրապարակել էր ՔՊ ցանկն այն անտուն պատգամավորների, որոնք, մանդատին զուգահեռ, տան տեր են դարձել: Շարունակելով ուսումնասիրել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների տները՝ գալիս ենք որոշակի եզրակացության. նրանք ոչ միայն ընտրական ոլորտում են կեղծիքներ անում, այլ նաեւ հայտարարագրեր ներկայացնելիս: Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի տարեկան հայտարարագրերում ժամանակ առ ժամանակ ավելանում կամ պակասում են որոշ տվյալներ: Ըստ այդմ՝ ներկայացնում ենք անտուն ՔՊ-ականների ցանկի 2-րդ մասը:

Անդրանիկ Քոչարյան - 2022 թվականին՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, որի ձեռք բերման եղանակը՝ ժառանգություն: Ումից՝ պարզ չէ:

Կարեն Սարուխանյան - 2021 եւ 2022 թվականներին՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, ձեռք բերման եղանակը՝ ժառանգություն. նա նաեւ ԱԺ բյուջեից ստանում է 100 հազար դրամ՝ տան վարձավճարի փոխհատուցում:

Տրդատ Սարգսյան - 2021 թվականին՝ Երեւանի Ավան վարչական շրջանում. 1 օրում ձեռք է բերել 2 բնակարան եւ ավտոտնակ:

Գեւորգ Պապոյան - 2019 թվականին՝ Շենգավիթ վարչական շրջանում:

Բաբկեն Թունյան- հիփոթեք (այլ տվյալ չկա):

Սարգիս Խանդանյան - հիփոթեք (այլ տվյալ չկա):

Լուսինե Բաղալյան - հիփոթեք (այլ տվյալ չկա):

Հակոբ Ասլանյան - հիփոթեք (այլ տվյալ չկա):

Ահա այսպես, ԱԺ պատգամավորները, մանդատին զուգահեռ, նաեւ տան տեր են դարձել, քանի որ նրանցից շատերը առաջին անգամ է, որ ստաբիլ աշխատավարձ են ստանում:

ԱՄՓՈՓԵԼ Է ԱՅՑԵՐԸ

Հայաստան եւ Ադրբեջան այցերն ամփոփել է Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը: Նա հայտարարությամբ է հանդես եկել:

Նա Հայաստան եւ Ադրբեջան է այցելել հոկտեմբերի 16-23-ը, հանդիպել է ղեկավար պաշտոնյաների, մարդու իրավունքների պաշտպանների, հակամարտությունից տուժածների, միջազգային եւ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, եղել է նաեւ հայաթափված Լեռնային Ղարաբաղում:

Հայաստանում Միյատովիչն այցելել է Կոտայքի մարզի Աղավնաձորի եւ Ծաղկաձորի տեղահանվածների կացարաններ: Նա նշում է. «Այնտեղ զրուցել եմ ղարաբաղցի հայերի, այդ թվում՝ ընտանիքների, տարեցների, հաշմանդամություն ունեցող եւ այլ խոցելի անձանց հետ»: Հանձնակատարը հանդիպումներ է ունեցել նաեւ միջազգային կազմակերպությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

«Հանձնակատարը կրկին ողջունեց Հայաստանի իշխանությունների ջանքերը՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով հանձնակատարի գրասենյակի, ՄԱԿ-ի այլ գործակալությունների եւ քաղաքացիական հասարակության աջակցությամբ բոլոր կարիքավորներին անհապաղ օգնելու համար: Նա կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին լիարժեք աջակցություն ցուցաբերել՝ ապահովելու անհրաժեշտ աջակցության կայունությունը: Հանձնակատարն ընդգծեց, որ Ադրբեջանը պետք է երաշխավորի տարածաշրջանում մնացած էթնիկ հայերի եւ Հայաստան մեկնածների մարդու իրավունքները՝ներառյալ ապահով եւ արժանապատիվ իրենց տները վերադառնալու իրավունքը»,- նշված է հաղորդագրությունում:

Հաղորդագրությունում նաեւ նշվում է, որ Ֆիզուլի եւ Աղդամ այցի ժամանակ հանձնակատարը տեսել է ավերված քաղաքներն ու գյուղերը, որոնք, նրա խոսքով, տասնամյակներ շարունակ ավերակ վիճակում են եղել: Երկու երկրներում էլ Միյատովիչն ընդգծել է բոլոր տեղահանվածների մարդու իրավունքների ապահովման կարեւորությունը՝ներառյալ նրանց արժանապատիվ եւ անվտանգ վերադառնալու իրավունքը. ականների եւ պատերազմի պայթուցիկ մնացորդների վտանգից պաշտպանվելու իրավունքը, գերիների՝ պաշտպանություն ստանալու մարդու իրավունքները:

Նաեւ նշվում է, որ հանձնակատարն իր դիտարկումներն ու առաջարկությունները կներկայացնի առաջիկայում:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ՄԻՐԶՈՅԱՆԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վստահության մթնոլորտ ստեղծելու համար անհրաժեշտ է հարգել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքները եւ դաշտպանել տարածաշրջանի հայկական հարուստ մշակութային եւ կրոնական ժառանգությունը»,- հոկտեմբերի 27-ին Հունգարիայի ԱԳ նախարար Պետեր Սիյարտոյի հետ համատեղ մամուլի ասուլիսում ասել է Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

Նախարարն ասաց, որ նախորդ ասուլիսում կողմերը քննարկել են Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ հարաբերությունների ընդլայնմանն առնչվող հարցեր: Վստահություն է հայտնվել, որ տնտեսական զարգացման տրամաբանության վրա կառուցված համագործակցությունը պսակվելու է դրական արդյունքով: Այս համատեքստում քննարկվել է Հայաստանի Հանրապետության մասնակցությունը տարածաշրջանային տարբեր ծրագրերին՝ հաշվի առնելով հոկտեմբերի 5-ի հայտարարությունը եւ ԵՄ-ի աջակցությունն այս ուղղությամբ, մասնավորապես՝ սեւծովյան էլեկտրամալուխի նախագծում: Միրզոյանը նաեւ շնորհակալություն է հայտնել Հունգարիային ԵՄ առաքելությանը մասնակցելու համար:

Խոսելով տարածաշրջանային զարգացման մասին՝ ՀՀ ԱԳ նախարարն ընդգծել է, որ կայուն եւ արժանապատիվ խաղաղության հասնելու համար ուժի չկիրառման քաղաքականության եւ դրա կիրառման սպառնալիքի ու այլատյացության բացառումն էկզիստենցիալ նշանակություն ունի, մանավանդ որ մենք արդեն ականատես ենք եղել դրա դրսեւորմանը, ինչպես բազմիցս ասվել է:

«Ընդամենը մեկ ամիս առաջ Լեռնային Ղարաբաղում, ըստ էության, ավարտվեց էթնիկ զտումների քաղաքականությունը: Ավելի քան 100 հազար հայեր, փրկելով իրենց կյանքը, լքեցին իրենց պատմական հայրենիքը եւ որպես փախստական ??ապաստան գտան Հայաստանի Հանրապետությունում: Ակնհայտ է, որ տարածաշրջանում կայուն խաղաղությունը պահանջում է տարածաշրջանի բոլոր երկրների կողմից արդյունավետ քայլեր եւ մաքսիմալիստական ??նկրտումներից հրաժարում: Դա հնարավոր է: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ կայուն խաղաղության հասնելը եւ համաձայնագրի կնքումը հնարավոր է, եթե երկու երկրների տարածքային ամբողջականությունը միանշանակ ճանաչվի, եւ սահմանների սահմանազատումն իրականացվի՝ Ալմաթիի հռչակագրի եւ ԽՍՀՄ քարտեզների հիման վրա: Սա արտացոլվել է Գրանադայի հայտարարության մեջ»,- ասաց Միրզոյանը:

Սիյարտոն հույս է հայտնել, որ տասնամյակների թշնամությունից հետո տարածաշրջանի մարդիկ կկարողանան խաղաղ ապրել: «Տասնամյակների տառապանքներից հետո տարածաշրջանի բոլոր բնակիչներն արժանի են նրան, որ խաղաղությունն ու անդորրը տիրեն», - ասել է հունգարացի նախարարը:

Հավելենք նաեւ, որ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրն՝ Միրզոյանը նշել է, որ այն ավելի է սրվել:

Պատասխանելով հարցին, թե ինչպես կարելի է կասեցնել ադրբեջանական վանդալիզմը Լեռնային Ղարաբաղի Բաքվի վերահսկողության տակ գտնվող տարածքներում՝ Միրզոյանը հիշեցրել է, որ հայկական կողմը կապ է հաստատել ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ միջազգային այլ իշխանությունների հետ՝ այցը կազմակերպելու համար: «Այժմ առաքելությունն էլ ավելի պահանջված է: Հուսով ենք, որ այն շուտով տեղի կունենա: Մենք աշխատում ենք այս ուղղությամբ»,- ասաց Միրզոյանը:

Արտգործնախարարը շնորհակալություն հայտնեց իր գործընկերոջը, որն անկեղծ ցանկություն հայտնեց իր ներդրումն ունենալ՝ ապահովելով հայկական մշակութային եւ հոգեւոր ժառանգության օբյեկտների անվտանգությունն ու հասանելիությունը: Նա նաեւ շնորհակալություն հայտնեց 2021 թվականին Ադրբեջանից 5 գերի հայերի ազատ արձակման, իսկ այժմ էլ Լեռնային Ղարաբաղից փախստականներին, հիմնականում՝ երեխաներին օգնելու համար:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳԱԶԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ՞Ց

EADaily-ն ներկայացրել է Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Հակոբ Վարդանյանի ելույթից մի հատված՝ Թբիլիսիի «Մետաքսի ճանապարհ» միջազգային համաժողովի շրջանակում: Նա հայտարարել է, թե Հայաստանը պատրաստ է գազ գնել Ադրբեջանից երկրների միջեւ քաղաքական տարաձայնությունները լուծելուց հետո:

«Հակամարտության պատճառով Ադրբեջանից Հայաստան գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցումը շոկային իրադարձություն էր Հայաստանի գազաէլեկտրական համակարգի համար: Այն ժամանակ մենք գազ էինք գնում Ադրբեջանից, իսկ հետո սկսեցինք Վրաստանի տարածքով նոր գազատարի շինարարությունը մեր երկիր գազ մատակարարելու համար: Հուսով եմ, որ մեր տարածաշրջանում խաղաղություն կլինի, եւ մենք կկարողանանք համագործակցել եւ դիվերսիֆիկացնել մեր էներգետիկ համակարգերը, ինչպես այն օրերին»,- նշել է նա:

ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԻՐԱՆՈՒՄ

Իրանում երեկ մեկնարկել են «Էքթեդար 1402» («Իշխանություն 2023») լայնածավալ ցամաքային զորավարժությունները: Այս մասին հայտնում է «ԻՌՆԱ» գործակալությունը:

Բրիգադային գեներալ Ամիր Չեշակն այս առնչությամբ ասել է. «Այս զորավարժություններին ներգրավված են հետեւակ, զրահատեխնիկա, հրթիռներ, հրետանի, օդուժ, անօդաչու սարքեր, ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներ եւ օժանդակ ավիացիա»:

Նա նաեւ նշել է, որ զորավարժությունների նպատակն է նոր սպառնալիքների դեպքում զսպման կարողության, ինչպես նաեւ կայուն անվտանգության զարգացումը:

Զորավարժությունները կտեւեն երկու օր:

ԱՅՑԵԼԵԼ Է ԱԺ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ առավոտյան եկել էր խորհրդարան:

Տեղեկացանք, որ ընդամենը կարճ ժամանակով է նա եկել խորհրդարան, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ ծաղիկներ է խոնարհել հոկտեմբերի 27-ի զոհերի հիշատակին ու հեռացել:

Մեր աղբյուրների հաղորդմամբ՝ նա պատգամավորների հետ առանձին հանդիպումներ չի ունեցել:

Հիշեցնենք, որ ահաբեկչությունից անցել է 24 տարի:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»-Ի ԿԱՌԱՎԱՐԻՉԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հրանտ Ղալթախչյանին մեղադրանք է առաջադրվել:

Նա, հանդիսանալով առեւտրային կազմակերպության ծառայող՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Իջեւանի մասնաճյուղի կառավարիչ, համաձայնության գալով նույն բանկի ոսկերիչ Գարիկ Մալաքյանի հետ, 2020թ. օգոստոսից մինչեւ 2021թ. մարտի 9-ն ընկած ժամանակահատվածում, թվով 7 վարկառուների՝ Հասմիկ Ստեփանյանի, Մայա Թանանյանի, Անահիտ Մադաթյանի, Արամայիս Միրզոյանի, Դավիթ Լալազարյանի, Արտուշ Ղուկասյանի եւ Մարիետա Ստեփանյանի անվամբ ընդհանուր 2.761.1 գրամ ընդհանուր քաշով, 583 հարգի ոսկյա իրերի փոխարեն, գրավադրել են ընդհանուր 691.6 գրամ, որից 222.1 գրամը՝583 հարգի ոսկյա, իսկ 468,9 գրամը՝ այլ մետաղներից պատրաստված իրեր:

Դրանց քանակի եւ տեսակի վերաբերյալ Գարիկ Մալաքյանի հետ նախնական համաձայնությամբ պատրաստել են ակնհայտ կեղծ պայմանագրեր, որոնք օգտագործելով՝ ստացել են ընդհանուր 51.063.000 ՀՀ դրամ, ինչի արդյունքում «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 51.063.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Գարիկ Մալաքյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով առեւտրային կազմակերպության ծառայող՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Իջեւանի մասնաճյուղի ոսկերիչը, համաձայնության գալով նույն բանկի կառավարիչ Հրանտ Ղալթախչյանի հետ, 2020թ. օգոստոսից մինչեւ 2021թ. մարտի 9-ն ընկած ժամանակահատվածում, թվով 7 վարկառուների՝ Հասմիկ Ստեփանյանի, Մայա Թանանյանի, Անահիտ Մադաթյանի, Արամայիս Միրզոյանի, Դավիթ Լալազարյանի, Արտուշ Ղուկասյանի եւ Մարիետա Ստեփանյանի անվամբ ընդհանուր 2.761.1 գրամ ընդհանուր քաշով, 583 հարգի ոսկյա իրերի փոխարեն, գրավադրել են ընդհանուր 691.6 գրամ, որից 222.1 գրամը՝583 հարգի ոսկյա, իսկ 468,9 գրամը՝ այլ մետաղներից պատրաստված իրեր, որոնց քանակի եւ տեսակի վերաբերյալ Հրանտ Ղալթախչյանի հետ նախնական համաձայնությամբ պատրաստել են ակնհայտ կեղծ պայմանագրեր, որոնք օգտագործելով՝ ստացել են ընդհանուր 51.063.000 ՀՀ դրամ, ինչի արդյունքում «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 51.063.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Ալլա Բեկնազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հանդիսանալով առեւտրային կազմակերպության ծառայող՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Իջեւանի մասնաճյուղի ՀՍԴԳ բաժնի գանձապահ, պարտականություն ունենալով վարկային պայմանագրերի արդյունքում ստացված գումարները հանձնել հիշյալ իրերը գրավադրված անձանց, ոչ պատշաճ է կատարել իր ծառայողական պարտականությունները: Օժանդակել է Հրանտ Ղալթախչյանին եւ Գարիկ Մալաքյանին, որոնք 2020թ. օգոստոսից մինչեւ 2021թ. մարտի 9-ն ընկած ժամանակահատվածում, թվով 7 վարկառուների՝ Հասմիկ Ստեփանյանի, Մայա Թանանյանի, Անահիտ Մադաթյանի, Արամայիս Միրզոյանի, Դավիթ Լալազարյանի, Արտուշ Ղուկասյանի եւ Մարիետա Ստեփանյանի անվամբ 2.761.1 գրամ ընդհանուր քաշով, 583 հարգի ոսկյա իրերի փոխարեն, գրավադրել են ընդհանուր 691.6 գրամ, որից 222.1 գրամը՝583 հարգի ոսկյա, իսկ 468,9 գրամը՝ այլ մետաղներից պատրաստված իրեր, որոնց արդյունքում ստացված ընդհանուր 51.063.000 ՀՀ դրամը Գարիկ Մալաքյանի եւ Հրանտ Ղալթախչյանի կողմից տնօրինելուն օժանդակելու նպատակով առձեռն հանձնել է վերջիններիս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԵՏԱՀԱՅԱՑ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27–Ը՝ ԱՅՍՕՐ

1999 թվականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանյանի եւ մյուսների կողմից տեռորիստական ակտ կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով (վարույթով) հանցավոր գործողություններին հնարավոր այլ մասնակիցների, դրանք կանխելու հնարավորություն ու պարտականություն ունեցած այլ պաշտոնատար անձանց, օգտագործված զենքերի ու ռազմամթերքի հետ առնչություն ունեցած անձանց պարզելու նպատակով 2022-2023 թվականների ընթացքում հարցաքննվել կամ լրացուցիչ են հարցաքննվել մի քանի տասնյակ անձինք:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումների հիման վրա՝ առգրավվել են բազմաթիվ պաշտոնատար անձանց անձնական գործեր, ինչպես նաեւ դեպքի վերաբերյալ հետաքրքրություն ներկայացնող քրեական վարույթներ, որոնք գտնվում են ուսումնասիրության փուլում:

Նախաքննության ընթացքում առգրավվել են գործի համար նշանակություն ունեցող բազմաթիվ տեսագրություններ եւ ձայնագրություններ, դրանցով նշանակվել են փորձաքննություններ, որոնք գտնվում են կատարման փուլում:

Ստացվել են դիմումներ եւ դրանց կից փաստաթղթեր, որոնց շուրջ հարցաքննվել են դիմումատուները, զննվել են ներկայացված փաստաթղթերը:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու նպատակով առաջ են քաշվել մի շարք քննչական վարկածներ, եւ դրանք ստուգելու նպատակով կազմվել է քննության պլան:

1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած տեռորիստական ակտի հանգամանքները պարզելու, ինչպես նաեւ գործի բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով կատարվում են վարութային եւ ապացուցողական գործողություններ:

Հիշեցնենք, որ 1999 թվականին Նաիրի Հունանյանի հանցախումբը, ներխուժելով Ազգային ժողով, սպանեց խորհրդարանի խոսնակ Կարեն Դեմիրճյանին, վարչապետ Վազգեն Սարգսյանին, խորհրդարանի փոխնախագահներ Յուրի Բախշյանին եւ Ռուբեն Միրոյանին, պատգամավորներ Արմենակ Արմենակյանին, Միքայել Քոթանյանին, Հենրիկ Աբրահամյանին եւ նախարար Լեոնարդ Պետրոսյանին: Եվս 8 հոգի վիրավորվեց: 2003 թվականի դեկտեմբերին դատարանը Հունանյանին եւ նրա հանցախմբի 5 անդամներին դատապարտեց ցմահ ազատազրկման, հանցախմբի եւս մեկ անդամ դատապարտվեց 14 տարվա ազատազրկման: Ցմահ ազատազրկման դատապարտված Վռամ Գալստյանը հետագայում ինքնասպանություն գործեց, իսկ 14 տարվա ազատազրկման դատապարտված Համլետ Ստեփանյանը հանկարծամահ եղավ:

ՔՆՆՉԱԿԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է զանգվածային անկարգություններ կատարելու կասկածանքով ձերբակալված անձի կողմից թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու մասով նախաքննությունը: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին ՀՀ ՔԿ-ից:

«2023 թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Հանրապետության հրապարակում զանգվածային անկարգություններ կատարելու հրապարակային կոչեր հնչեցվելուց հետո հավաքի մի խումբ մասնակիցներ մոտեցել էին ՀՀ կառավարության շենքի մուտքին եւ, չենթարկվելով ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին, սկսել էին հասարակական անվտանգությանը սպառնացող զանգվածային անկարգություններ կատարել: Դրանք զուգորդվել էին ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնության գործադրմամբ:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով եւ 328-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում, զանգվածային անկարգություններ կատարելու հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել էր Արմավիրի մարզի Դաշտ համայնքում հաստատված 29-ամյա տղամարդ: Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել էր դեղնականաչավուն զանգված եւ մեկ հատ մոխրացված հետքերով ապակյա գլանակ: Այդ առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ: Որոշում է կայացվել՝նշված երկու քրեական վարույթները միացնելու եւ համատեղ քննություն կատարելու մասին:

Նախաքննության ընթացքում նշանակված դատաքիմիական փորձաքննության եզրակացության համաձայն՝ երիտասարդի մոտ հայտնաբերված եւ փորձաքննության ներկայացված 3,78 գրամ հաստատուն չոր քաշով կանեփի բուսական մանրացված զանգվածը հանդիսանում է Մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Քննությամբ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ որոշում է կայացվել երիտասարդի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, եւ վերջինիս մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-րդ մասով:

Թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու մասով նախաքննությունն ավարտվել է: Այդ մասով անջատված վարույթի նյութերը մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար ուղարկվել են դատավարական հսկողություն իրականացնող դատախազին: Զանգվածային անկարգություններ կատարելու մասով նախաքննությունը շարունակվում է»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԾՐԱԳՐԻՆ՝ ԿՏՐԱԿԱՆԱՊԵՍ ԴԵՄ

Հոկտեմբերի 26-ին Բերդ քաղաքի Ժիրայր Անանյանի անվան մշակույթի տանը կայացել է հանրային բաց քննարկում: «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է «Վալլեքս գրուպ» ընկերությունների խմբի անդամ, մտադիր է Բերդ խոշոր համայնքի վարչական սահմաններում գտնվող Տավուշ-Խնձորուտ հանքային դաշտի տարածքում գտնվող օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնել:

Հանրային քննարկման նպատակն էր բացահայտել այդ թեմայի շուրջ հանրային կարծիքները, արձանագրել շահագրգիռ հանրության առաջարկություններն ու դիտողությունները:

Այդ թեմայով հանրային քննարկումը նախատեսված էր սեպտեմբերի 28-ին, սակայն «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ տնօրինությունը, նկատի ունենալով Արցախից Հայաստան բնակչության զանգվածային բռնագաղթը, որոշել էր հետաձգել հանրային քննարկումը: Բերդ համայնքի բնակիչների բացարձակ մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում նշված տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելուն: Հոկտեմբերի 26-ի հանրային քննարկման ժամանակ ելույթ է ունեցել «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն Սահակ Կարապետյանը, որը կարեւորել է «Վալլեքս գրուպի» գործունեությունը, Բերդ համայնքի համար նոր աշխատատեղերի ստեղծումը: Հետո ելույթ է ունեցել «Բերդ» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն Արթուր Երկանյանը, որը ներկայացրել է համայնքի բնության, շրջակա միջավայրի համար հանքարդյունահանման վնասները: Համայնքում հանքարդյունաբերության ծրագրի դեմ ելույթ են ունեցել նաեւ Վերին Կարմիրաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կամո Չոբանյանը, Չինչինի վարչական ղեկավար Կարեն Դարբինյանը եւ ուրիշներ: Հանրային քննարկման մասնակիցները կտրականապես դեմ են եղել համայնքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը: Հանրային քննարկմանը ներկա է եղել նաեւ Բերդ խոշոր համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը: Սպասվում է, որ առաջիկայում Բերդ համայնքի ավագանին այդ խնդրի կապակցությամբ որոշում կընդունի:

ՀՈՂԵՐԸ ՉԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ Տավուշի մարզի սահմանամերձ չօգտագործվող հողերը կազմում են 11412 հեկտար, որից վարելահող՝ 7210.7 հեկտար, խոտհարք՝ 462 հեկտար, արոտավայր՝ 2852.4 հեկտար, այլ՝ 831.9 հեկտար, տնամերձ՝ 55 հեկտար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Հոկտեմբերի 26-ին կայացած ավագանու նիստում ընտրվեցին Երեւանի քաղաքապետի տեղակալները. Արմեն Փամբուխչյանը նշանակվեց Երեւանի առաջին փոխքաղաքապետ, քաղաքապետի նախկին պատգոնակատար Լեւոն Հովհաննիսյանը՝ երկրորդ փոխքաղաքապետ, Սուրեն Գրիգորյանը վերանշանակվեց իր պատգոնին, հաջորդը «Հանրապետություն» խմբակցությունից Սարգիս Մաղաքյանն էր: Արմեն Փամբուխչյանի ունեցվածքին անդրադարձել էինք արդեն, այժմ ուսումնասիրենք այս 5 տարիների ընթացքում քաղաքապետի նախկին պատգոնակատար, այժմ Երեւանի երկրորդ փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանի ունեցվածքը:

Որտեղի՞ց եւ որքա՞ն ֆինանսական միջոցներով Հովհաննիսյանը դարձավ ավագանու անդամ, ապա՝ փոխքաղաքապետ: Լեւոն Հովհաննիսյանը մինչ ավագանու անդամ դառնալը աշխատել է բանկային համակարգում՝ «Զարգացման հայկական բանկում», «Արդշինբանկում», «ՎՏԲ Հայաստան բանկում»՝ որպես գլխավոր կամ առաջատար մասնագետ:

2018թ. սեպտեմբերի 23-ին կայացած Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է Երեւան քաղաքի ավագանու անդամ: Բանկային համակարգում աշխատելու տարիներին՝ 2017 թվականին, Հովհաննիսյանը բազմաբնակարան շենքում բնակարան է ձեռք բերել Երեւանի Արաբկիր վարչական շրջանում:

Հովհաննիսյանը հայտարարագիր ներկայացրել է այն ժամանակ, երբ քաղաքապետի առաջին տեղակալ էր, սակայն այն ներկայացրել է հայտարարագիր ներկայացնելու վերջին օրը՝ մայիսի 31-ին: Ըստ հայտարարագրի՝ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 556 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 300 հազար դրամ: Հովհաննիսյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 12 մլն 641 հազար դրամ, որից 6 մլն 354 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Management System International, Armenian Support Initiative կազմակերպությունից, 748 հազար դրամը՝ աշխատանքի վարձատրություն Երեւանի քաղաքապետարանից, 5 մլն 539 հազարը՝ աշխատանքի վարձատրություն «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 2 մլն 793 հազար դրամ:

Մեկ բնակարան էլ հայտարարագրել է Հովհաննիսյանի կինը՝ Թամարա Ղարիբյանը, որն այն ձեռք է բերել 2007 թվականին Արաբկիր վարչական շրջանում: Ընտանիքը տրանսպորտային միջոց չունի թերեւս այն պատճառով, որ արդեն 2 տարի է՝ Հովհաննիսյանը ծառայողական մեքենայով է շրջում: Կնոջ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 89 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 850 հազար դրամ:

Հովհաննիսյանի կինը եւս աշխատում է նույն բանկում՝ «Արդշինբանկում», որտեղ նախկինում աշխատում էր ամուսինը: Թամարա Ղարիբյանի տարեկան եկամուտները կազմել են 6 մլն 255 հազար դրամ, որն էլ նույն բանկից ստացված աշխատանքի վարձատրություն է: Կնոջ ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 150 հազար դրամ: Հիշեցնենք նաեւ, որ Լեւոն Հովհաննիսյանը Տիգրան Ավինյանի հետ շատ մտերիմ հարաբերությունների մեջ է, ինչի շնորհիվ էլ վերընտրվել է: Նշենք նաեւ, որ ամուսինները իրենց ստացված եկամուտները ոչ մի անգամ չեն ծախսել, նույնիսկ վարկերի մարմանը գումարներ չեն ուղղել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Նոյեմբերի 1-ից երաժիշտները, նկարիչները ու մշակութային գործունեություն ծավալող մյուս անհատները ու խմբերը Երեւանի հանրային բացօթյա վայրերում պետք է գործեն ավագանու սահմանած նոր պահանջներով:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին Երեւանի քաղաքապետարանի լրատվության վարչությունից, առավոտյան ժամը 10:00-ից մինչեւ 21:00-ն բնակելի եւ հասարակական շենքերից պետք է պահպանել հեռավորություն՝ առնվազն 10 մետր, ժամը 21:00-23:00-ն՝ 100 մետր:

«Սեպտեմբերի 12-ին Երեւանի ավագանու 849 որոշմամբ հաստատվեց նախագիծ, որը կանոնակարգում է հանրային բացօթյա վայրերում մշակութային գործունեություն իրականացնելու կարգը: Մենք փորձում ենք ներդաշնակ միջավայր ապահովել ինչպես մշակութային գործունեություն իրականացնողների, այնպես էլ քաղաքի բնակիչների եւ հյուրերի համար»,-նշել է Երեւանի քաղաքապետարանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գեւորգ Սահակյանը:

«Քաղաքապետարանի նպատակը առաջին հերթին բնակելի եւ հասարակական վայրերում քաղաքացիների անդորրն ու հանգիստն ապահովելն է: Բազմաթիվ են բողոքները, որ խանգարում են նախ՝ քաղաքացիների ազատ տեղաշարժը, ապա՝ օբյեկտների գործունեությունը: Լինում են դեպքեր, երբ նրանց գործունեությունից հետո աղտոտվում է տարածքը: Խնդրահարույց հասցեներն են Հյուսիսային պողոտան, Աբովյան փողոցը»,- ասել է քաղաքապետարանի հասարակական կարգի պահպանության ծառայության պետ Արամ Գյուլզադյանը: Նոր կանոնակարգով բացօթյա մշակութային գործունեությունը պետք է չխոչընդոտի հետիոտնի տեղաշարժը, փոխադրամիջոցների երթեւեկությունն ու հարակից օբյեկտների գործունեությունը: Ձայնի ուժգնությունն էլ պետք է չգերազանցի 60 դեցիբելը: «Մենք ի սկզբանե որոշել ենք գրաքննություն չանել. Սահմանադրությամբ դա արգելված է, բայց սահմանադրական կարգը տապալելու, քրեական ենթամշակույթին վերաբերող տերմինաբանություն ու հայհոյանքներ չեն կարող հնչել»,- ընդգծել է Գեւորգ Սահակյանը:

Քաղաքապետարանի եւ վարչական շրջանների կողմից կսահմանվի ամենօրյա հսկողություն: Մինչ այդ բոլորը նախազգուշացվում են: Նոյեմբերի 1-ից պահանջները խախտողներին ստիպված կլինեն տուգանել:

«Առաջին խախտման դեպքում Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը նախատեսում է նախազգուշացնում կամ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 100-200-ապատիկի չափով, իսկ կրկնելու դեպքում տուգանքն էլ մեծանում է՝ հասնելով 500-800 հազար ՀՀ դրամի»,- հավելել է Արամ Գյուլզադյանը:

Երեւանի փողոցներում մշակութային ժամանցային նախաձեռնությունները կարգելվեն միայն սգո եւ հիշատակի օրերին: Նոր պահանջներն ու սահմանափակումներն արգելում են դյուրավառ ու պայթյունավտանգ նյութերի գործածումը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՎԱՐԱԿՈՒՄ

ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանը 2007 թվականից համարվում է կարմրուկից էլիմինացված երկիր, այսինքն՝ Հայաստանում կարմրուկի տեղական շրջանառություն չի գրանցվում: ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի իմունականխարգելման եւ կառավարելի վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ Սվետլանա Գրիգորյանը նշեց, որ Հայաստանում կարմրուկի պատվաստումների մակարդակն այնքան բարձր է, որ այդպիսի ցուցանիշ է գրանցվել:

«Իհարկե, ամեն տարի ունենում ենք բերովի դեպքեր, եւ դրանք տեղային որոշակի բռնկման պատճառ են դառնում, ինչը տեղի ունեցավ այս տարի: Ասեմ, որ կարմրուկով հիմնականում հիվանդանում են չպատվաստված կամ թերի պատվաստված անձինք: 2023 թվականի մարտին Հայաստանում գրանցված բռնկումը նույնպես պայմանավորված է բերովի դեպքով: Մարտ ամսից մինչեւ հիմա ունենք 471 հաստատված դեպք, որի գերակշիռ մասը չպատվաստված կամ թերի պատվաստված անձինքն են»,- ասաց Սվետլանա Գրիգորյանը:

Հիվանդացածների 70 տոկոսը երեխաներ են: Մասնագետը նկատեց, որ առհասարակ կարմրուկի վիրուսն ունի վարակելիության բավական բարձր ցուցանիշ: Եթե վարակված անձի հետ շփվում է 10 չպատվաստված, ապա 9-ը կարող է վարակվել: Հանրապետությունում անվճար հասանելի են կարմրուկի դեմ պատվաստանյութերը: Եթե անձը չի հիշում իր պատվաստումների մասին կամ ընդհանրապես չի ստացել, ապա կարող է դիմել պոլիկլինիկա ու պատվաստվել:

«Օրերս ունեցանք ցավալի դեպք. գրանցվեց կարմրուկից մահվան դեպք: Երեխան չպատվաստված էր, սակայն ուներ ուղեկցող հիվանդություններ: Եթե տվյալ երեխայի շրջապատում անձինք լինեին պատվաստված, քանի որ երեխան չէր կարող պատվաստվել, ապա չէին հիվանդանա, ու վիրուսը չէր փոխանցվի երեխային: Մեր հորդորն է՝ հետեւողական լինել ու պատվաստվել»,-հավելեց մասնագետը:

Ներկայում կարմրուկով վարակվելու դեպքերի ինտենսիվությունը նվազել է, սակայն շաբաթական կտրվածքով դեռ շարունակում են նոր դեպքեր գրանցվել:

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼԸ՝ ԱՎՏՈՄԱՏ

ԼՂ-ից բռնի տեղահանվածներին կառավարության՝ հոկտեմբերի 26-ի նիստին ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տրվեց, որի շնորհիվ մեր հայրենակիցները կկարողանան ավելի բարձր պաշտպանվածություն ունենալ թե՛ Հայաստանի տարածքում, թե՛ Հայաստանի տարածքից դուրս: Այդ մասին հոկտեմբերի 27-ին՝ ճեղազրույցի ժամանակ, ասաց ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը:

«Ինչո՞ւ. որովհետեւ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի ուժով մեր հայրենակիցները, «Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ըստ էության, ճանաչվում են փախստականներ եւ օգտվում են միջազգային կոնվենցիոն բոլոր մեխանիզմներից եւ, ըստ այդմ, միջազգային պաշտպանության ներքո են գտնվում թե՛ ՀՀ տարածքում, թե՛ ՀՀ տարածքից դուրս:

Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակը կառավարության համապատասխան որոշման շրջանակներում տրվել է մեկ տարի ժամկետով, իհարկե, երկարաձգման հնարավորություն է նախատեսված»,- ասաց նախարարի տեղակալը:

Արփինե Սարգսյանը նաեւ հստակեցրեց, թե որ սուբյեկտներին է տրվում այսպիսի կարգավաճակ:

Այդպիսի երեք խումբ կա: Առաջին խմբում ներառված են անձինք, որոնք հաշվառված են ԼՂ բնակչության ռեգիստրում: Երկրորդ խմբում այն անձինք են, որոնք թեկուզ հաշվառում չունեն, բայց նրանց վերջին հաշվառման հասցեն եղել է ԼՂ-ն: Եվ նաեւ նրանք, որոնք հաշվառված չեն ԼՂ բնակչության ռեգիստրում, սակայն բռնի տեղահանման հետեւանքով հաշվառվել են ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության կողմից վարվող տվյալների շտեմարանում:

«Բացառություն են այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն, որոնք կարող են օգտվել այլ երկրի պաշտպանությունից: Նշեմ, որ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի ստացումն ավտոմատ է, ըստ էության, որովհետեւ մեր քաղաքացիները, մեր հայրենակիցները որեւէ գործողություն այս առումով կատարելու պարտականություն չունեն, որովհետեւ թե՛ օրենքի ուժով ընդհանրապես, թե՛ հատկապես կառավարության այս որոշման ուժով մեր հայրենակիցներն արդեն իսկ ստացել են ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ՝ դրանից բխող բոլոր դրական հետեւանքներով, որոնք ավելի բարձր երաշխիք կնախատեսեն նրանց իրավունքների երաշխավորման հարցում թե՛ ներպետական մակարդակում, թե՛ միջազգային տարբեր ատյանների շրջանակներում»,- ասաց նա:

ՎԵՐԼՈՒԾԵԼ Է

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՆՎԱԶՈՒՄ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամը, ելնելով ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալներից, վերլուծել է ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին:

Այսպիսով, տնտեսական ակտիվության աճի տեմպը որոշակիորեն արագանալուց հետո՝սեպտեմբերին, կտրուկ դանդաղել է՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների աճի տեմպի դանդաղմամբ եւ արդյունաբերության անկման տեմպի խորացմամբ: Սեպտեմբեր ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է ընդամենը 5.6%: Ծառայությունների աճի տեմպի եռակի դանդաղումն իր հերթին հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով (կազմել է 4.6%), սակայն սեպտեմբերին ծառայությունների ոլորտի վրա բացասական ազդեցություն են ունեցել նաեւ Ադրբեջանի ագրեսիայի հետեւանքով Արցախում տեղի ունեցող դեպքերը: Արդյունաբերության ոլորտի բացասական զարգացումներն ավելի են խորացել եւ շարունակում են մտահոգիչ մնալ: Արդյունաբերության ոլորտում արդեն երկար ժամանակ գրանցվում են անկման ցուցանիշներ: Ընդ որում՝ անկում է գրանցվում ինչպես հանքարդյունաբերությունում, այնպես էլ մշակող արդյունաբերությունում: Այսպես, սեպտեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 4.3% անկում, իսկ մշակող արդյունաբերությունում, օգոստոսի տվյալներով, գրանցվել է շուրջ 9.4% անկում: Այս իրավիճակը խոսում է ՀՀ տնտեսության ներուժի եւ մրցունակության անկման մասին, ինչը ապագայում կհանգեցնի տնտեսական աճի տեմպի պերմանենտ դանդաղմանը: Պետական բյուջեի կատարումը շեղվել է պլանավորվածից շուրջ 270.8 մլրդ դրամով: Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային, իսկ դրա կատարման շեղումն ամսեամիս ավելանում է: ՀՀ պետական բյուջեն 2023թ. բոլոր ամիսներին եղել է հավելուրդային՝ պլանավորված պակասուրդայինի փոխարեն: Բյուջեի հունվար-սեպտեմբեր ամիսների հավելուրդը կազմել է 74.6 մլրդ դրամ՝ պլանավորված 196.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Այսինքն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է 270.8 մլրդ դրամով: Պետական բյուջեի ծախսերի աճն էապես դանդաղել է: Ընդ որում՝ ծախսերի քիչ լինելը ավելի քան կիսով չափ պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչը վկայում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրները դարձել են «քրոնիկ»:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԿԱՐԾԻՔ

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԻՑ

Շուտով էկրաններին կհայտնվի նոր նախագիծ՝ «Գերիները»: Սցենարի հեղինակն Անի Մաղամյանն է: Սերիալը բաղկացած է լինելու 24 սերիայից: Ռեժիսորն է Հայկ Վարդանյանը:

Սերիալի դերասանական անձնակազմում ընդգրկված են Հայկ Հովհաննիսյանը, Մարինկա Խաչատրյանը, Սիսիան Ստեփանյանը, Լուիզա Մելքոնյանը եւ այլք:

Ֆիլմի մանրամասների, իր կերտած կերպարի եւ այլնի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է գլխավոր դերակատարներից Հայկ Հովհաննիսյանի հետ:

«Կերպարիս անունը «Գերիներ» հեռուստանախագծում Էդգար է, որն ակտիվ առօրյա ունեցող երիտասարդ է, սովորում է համալսարանում, ունի ընկերուհի»,- պատմում է Հայկը:

Նրա խոսքով՝ Էդգարը Հայկի հետ վստահաբար ունի նմանություն, սակայն ամենաակնառուն կարելի է հենց ակտիվությունը նշել:

Հայկն առաջարկը ստացել է Սերգեյ Հայրապետյանից՝ «Նոր Հայաստան» հեռուստաընկերության պրոդյուսերից, եւ սիրով ընդունել:

«Դերասանական կազմից կարող եմ առանձնացնել Մարինկա Խաչատրյանին եւ Սիսիան Ստեփանյանին, որոնց հետ խաղալուց մեծ բավականություն եմ ստացել»,- նշել է նա:

Խոսելով դերասանական անձնակազմի մասին՝ Հովհաննիսյանը, որպես լավ խաղընկերներ, նշում է նաեւ Էրմինային եւ Ավետին՝ հավելելով, որ խաղընկերները եւ նկարահանող թիմը մեծ դժվարությամբ են ստեղծել նախագիծը:

«Խոսքը տեղանքի ու գրաֆիկի բարդության ու դժվարության մասին է: Նկարահանումները անց են կացվել Երեւանում, Դիլիջանում, Իջեւանում, Ալավերդիում, հիմնականում՝ սարերում, քարանձավներում եւ գետերի շրջակայքում»:

Հետաքրքիր դեպքեր մտաբերելիս Հայկը հիշում է, որ հենց քարանձավներում նկարահանումների ժամանակ իրենց խանգարել են ջղջիկները, եւ անընդհատ գրաֆիկից հետ են ընկել:

«Հուսամ՝ հեռուստադիտողին կկարողանանք փոխանցել էմոցիաներն ու արժանի գնահատական կստանանք»,- եզրափակում է Հայկը:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՆ-Ն՝ ՖՐԱՆՍԻԱՅԻՆ ⇨

Ֆրանսիայի Հանրապետության մշակույթի նախարար Ռիմա Աբդուլ-Մալակը Հայաստան կատարած այցի ժամանակ հնչեցրել է Ղարաբաղի տարածքում հայկական պատմամշակութային հուշարձանների անհետացման սպառնալիքի հետ կապված ահազանգեր եւ կոչ արել ստեղծել դրանց պաշտպանության տարբեր մեխանիզմներ:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Այխան Հաջիզադեն, չկարողանալով թաքցնել գերատեսչության վերաբերմունքը ֆրանսիական կողմի նկատմամբ, մեկնաբանել է Ֆրանսիայի մշակույթի նախարարի այս հայտարարությունները՝նշելով, թե ֆրանսիացի պաշտոնյայի այցը եւ Լեռնային Ղարաբաղի տարածքում մշակութային ժառանգության մասին հայտարարությունները, իբր, ֆրանսիական կողմի «հերթական թուլության եւ կողմնակալության» օրինակ են:

«Ադրբեջանը քաջ գիտակցում է իր տարածքում գտնվող բոլոր մշակութային եւ պատմական հուշարձանների պաշտպանության կարեւորությունը եւ մասնավորապես իր պարտավորությունները: Ֆրանսիան բարոյական իրավունք չունի նման պահանջներ ներկայացնելու որպես երկիր, որը բռնագրավել է այլ ժողովուրդներին պատկանող պատմամշակութային գույքը:

Հայտարարությունները, որ մշակութային եւ պատմական հուշարձանները վտանգի տակ են գտնվում, անհիմն են, ինչը հաստատել են տարածաշրջանում ՄԱԿ-ի երկու առաքելությունները»,- հայտարարել է Հաջիզադեն՝մոռանալով, սակայն, որ ՄԱԿ-ի նշյալ առաքելությունները անգամ ԼՂ են այցելել արդեն ամբողջական բռնի հայաթափումից հետո, չեն այցելել պատմամշակութային վայրեր, չեն ուսումնասիրել կոթողները, այլ տվել են ընդհանրական ու կողմնակալ կարծիք:

ՓՈՄՆ Է ԸՆԿԵԼ

Ֆուտբոլի նախկին աստղ Ժերար Պիկեն միջոցառումներից մեկի ժամանակ ընկել է բեմից: Այդ պահը ֆիքսվել է տեսանյութով, որն այժմ դարձել է վիրուսային: Իսպանացի նախկին պաշտպանը բեմում է եղել իր կազմակերպության՝ Kings League Americas գալա-ին, երբ որոշել է ողջունել երկրպագուներին: Նա, բջջային հեռախոսը ականջին, մոտեցել է բեմի եզրին, երբ հանկարծ ընկել ու անհետացել է: Ըստ ամենայնի, Պիկեն ընկել է բեմի տակ գտնվող փոսը:

Պիկեի նախկին սիրելիի՝ Շակիրայի երկրպագուներն այս միջադեպն անվանել են կարմա այն բանի համար, թե ինչպես է նա վարվել երգչուհու հետ:

Պիկեն ու Շակիրան բաժանվել են 2022 թվականին. նրանք միասին էին, բայց ամուսնացած չեն եղել: Բաժանումից յոթ ամիս անց Պիկեն հայտարարեց 24-ամյա Կլարա Չիա Մարտիի հետ իր հարաբերությունների մասին: Հունիսին հիթային երգչուհին բացահայտեց, որ Պիկեն իրեն դավաճանել էր այն ժամանակ, երբ իր հայրը ինտենսիվ թերապիայի բաժանմունքում էր: «Շակիրան պլանավորել էր դա»,-կատակել է X-ի (նախկին Twitter) օգտատերերից մեկը, իսկ մյուսը ավելացրել է. «Շակիրա վուդու»:

«Մենք բոլորս կարող ենք համաձայնել, որ մեղավորը Շակիրան է»,-նշել է մեկ ուրիշը:

ՍՊՈՐՏ

«ՓՅՈՒՆԻԿ»-Ը՝ ԱՌԱՋԱՏԱՐ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության առաջատարն անփոփոխ է:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ հայկական Պրեմիեր լիգայի 13-րդ տուրից հետո Հայաստանի առաջնության առաջատարը մնում է «Փյունիկ»-ը: Եղիշե Մելիքյանի թիմն ունի 33 միավոր: Երկրորդ եւ երրորդ տեղերը 26-ական միավորով կիսում են «Ուրարտու»-ն եւ «Արարատ-Արմենիա»-ն:

«Ալաշկերտ»-ն ունի 25, «Նոա»-ն՝24, «Արարատ»-ը՝ 17, ԲԿՄԱ-ն՝ 13, «Շիրակ»-ը՝ 10 միավոր: Վերջին երկու հորիզոնականներում են «Վեստ Արմենիա»-ն եւ «Վան»-ը՝7 միավոր:

Հայաստանի առաջնության 14-րդ տուրի հանդիպումները կկայանան հոկտեմբերի 28-30-ը:

ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆԸ ՀԱՂԹԱՆԱԿԵՑ

Հայ շախմատիստները շարունակում են ելույթները ՖԻԴԵ-ի «Գրանդ Սվիս» մրցաշարում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Մեծ Բրիտանիայի Մեն կղզում ընթացող մրցաշարում կայացել են երկրորդ տուրի պարտիաները: Հայաստանը ներկայացնող շախմատիստներից Հրանտ Մելքումյանը, Հայկ Մարտիրոսյանը, Մանուել Պետրոսյանը, Շանթ Սարգսյանը, Գաբրիել Սարգսյանը ոչ-ոքի են ավարտել պարտիաները, իսկ Սամվել Տեր-Սահակյանը հաղթանակ է տոնել: Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին առաջատար, այժմ ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Լեւոն Արոնյանը կիսել է միավորը:

Կանանց մրցաշարում Հայաստանի երկու ներկայացուցիչները մրցեցին միմյանց հետ, եւ պարտիան ավարտվեց ոչ-ոքի:

ՖԻԴԵ-ի «Գրանդ Սվիս» մրցաշարը մեկնարկել է հոկտեմբերի 25-ին եւ կեզրափակվի նոյեմբերի 11-ին: Մրցաշարը բաղկացած է 11 տուրից եւ անցկացվում է շվեյցարական մրցակարգով: Մրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 460 հազար դոլար, առաջին հորիզոնականը զբաղեցրած շախմատիստը կստանա 80 հազար դոլար: Կանանց եւ տղամարդկանց մրցաշարում 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները իրավունք են ստանում մասնակցելու 2024 թվականի հավակնորդների մրցաշարին:

ՀԵՌԱՑՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

«Լիվերպուլի» լեգենդար հարձակվող Ռոբի Ֆաուլերը հեռացվել է Սաուդյան Արաբիայի երկրորդ դիվիզիոնում հանդես եկող «Ալ Կադիսիայի» գլխավոր մարզիչի պաշտոնից. հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

48-ամյա անգլիացի մասնագետը 4 ամիս առաջ էր գլխավորել թիմը, որը առաջնության 8 տուրից հետո 20 միավորով երկրորդ տեղում է:

Ռոբի Ֆաուլերին «Ալ Կադիսիայի» գլխավոր մարզիչի պաշտոնում փոխարինել է Մադրիդի «Ռեալի» եւ Իսպանիայի հավաքականի նախկին խաղացող Միչելը, որի նախորդ թիմը հունական «Օլիմպիակոսն» էր:

● *Հոկտեմբերի 29-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Թափանցիկ քաղաքի հեքիաթը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-4000 դրամ: Սկիզբը՝ժամը 13:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

ՀԱՐՑ. Ո՞վ ենթակա չէ պարտադիր զինվորական ծառայության:

Լյուդվիգ Մուշեղյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պարտադիր զինվորական ծառայության ենթակա չէ այն քաղաքացին, որը նախկինում դատապարտվել է ազատազրկման ծանր կամ առանձնապես ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորությամբ կատարած հանցագործության համար եւ ազատազրկման ձեւով պատիժ է կրել երեք տարուց ոչ պակաս ժամկետով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 139-րդ կամ 142-րդ կամ 266-րդ կամ 272-րդ կամ 327.2-րդ կամ 327.3-րդ կամ 327.5-րդ կամ 362-րդ հոդվածով կամ 363-րդ հոդվածի 2-րդ եւ (կամ) 3-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու համար:

ՀՀ ՊՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտարարված զորակոչի ժամանակ պարտադիր զինվորական ծառայության չի կարող զորակոչվել այն անձը, որը պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձեւով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության:

ՋՈՒՐ

ՀԱՐՑ. Ինչ անել, եթե ջրագծի վթարի կամ բնակարանի վերանորոգման պատճառով ջրաչափին ապամոնտաժելու կարիք կա:

Թովմաս Անտոնյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Բնակարանի վերանորոգման դեպքում ընկերությանն անհրաժեշտ է տեղեկացնել գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, դիմել Բաժանորդների սպասարկման գրասենյակ կամ զանգահարել «Հեռախոսային կենտրոն»՝ ջրաչափի կնքված հոլոգրաֆիկ կնիքը «Վեոլիա ջուր» ՓԲԸ համապատասխան մասնագետի կողմից հեռացնելու խնդրանքով:

Ջրագծի վթարի դեպքում, երբ անհետաձգելի վերանորոգում է պահանջվում, բաժանորդը իրավունք ունի պոկել ջրաչափի կնքված հոլոգրաֆիկ կնիքը այդ մասին «Վեոլիա ջուր» ՓԲԸ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կամ «Հեռախոսային կենտրոն» զանգահարելու միջոցով տեղեկացնելուց, բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը, ջրաչափի ցուցմունքը հայտնելուց եւ «Վեոլիա ջուր» ՓԲԸ համաձայնությունը ստանալուց հետո: «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից ջրաչափը ենթակա է վերակնքման բաժանորդի կողմից կնիքը պոկելու մասին տեղեկացնելու պահից մինչեւ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

«Վեոլիա ջուր» ՓԲԸ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պոկված հոլոգրաֆիկ կնիքը բաժանորդը պարտավոր է պահպանել եւ առեւտրային հաշվառքի սարքի վերակնքման պահին հանձնել մատակարարին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Թբիլիսիի՝ «Մետաքսի ճանապարհ» փորումին մասնակցող պատվիրակությունների ղեկավարների պատվին գալա ընթրիք է մատուցել:

Թբիլիսիի «Մետաքսի ճանապարհ» փորումն անցկացվում է վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հովանու ներքո: Փորումին մասնակցել են ավելի քան 2000 պատվիրակներ աշխարհի շուրջ 60 երկրներից:

Այդ փորումին մասնակցել է նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ
1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+4 +8	+11 +16
Կոտայքի լեռներ	+4 +8	+10 +14
Կոտայքի նախալեռներ	+9 +11	+17 +20
Գեղարքունիք	+3 +7	+8 +13
Լոռի	+8 +13	+18 +23
Տավուշ	+10 +15	+20 +25
Արագածոտնի լեռներ	+3 +6	+9 +13
Արագածոտնի նախալեռներ	+7 +10	+18 +21
Արարատ	+9 +12	+22 +24
Արմավիր	+8 +10	+21 +23
Վայոց ձորի լեռներ	+4 +6	+12 +15
Վայոց ձորի նախալեռներ	+8 +11	+21 +23
Սյունիքի հովիտներ	+14 +18	+21 +25
Սյունիքի նախալեռներ	+7 +12	+17 +21
ԼՂՀ	+13 +17	+21 +25
Երեւան	+11 +13	+20 +23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*